ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 փետրվարի 2024 թվականի N 158 - Ա

1988-1992 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԲՌՆԱԳԱՂԹՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԶԲԱՂԵՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների մասին» օրենքի 1-ին և 4-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 404 որոշման՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց օրենսդրությամբ սահմանված կարգով սեփականաշնորհել իրենց կողմից զբաղեցված բնակելի տարածքները՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման հավելվածում նշված հանրակացարանների զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ գույքի (հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքի) նկատմամբ ընդհանուր բաժնային սեփականության

իրավունքը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով անցնում է դրանց առանձին տարածքների նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերողներին:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքով սահմանված կարգի համաձայն՝ սեփականաշնորհվող բնակելի տարածքները, որպես առանձին գույքային միավոր առանձնացնելուց (անհրաժեշտության դեպքում) հետո, ապահովել սույն որոշման հավելվածում նշված բնակելի տարածքների սեփականաշնորհումը:

4. Հավելվածում նշված անձանց կողմից սեփականաշնորհվող բնակելի տարածքների «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքով սահմանված կարգով կազմված հատակագիծը (ցանկում նշված մակերեսների տարբերություն առաջանալու դեպքում՝ հիմք ընդունել նշված հասցեի սահմանված կարգով գրանցված համապատասխան վկայականի հատակագծի մակերեսը՝ մինչև 3% թույլատրելի շեղումով) ներկայացնելուց հետո, վերջիններիս հետ մեկ տարվա ընթացքում կնքել նվիրատվության պայմանագիր՝ նախատեսելով, որ պայմանագրի և պայմանագրից բխող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման նվիրառու հանդիսացող բնակիչների միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

01.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
փետրվարի 1-ի N 158 - Ա որոշման

Ց Ա Ն Կ

1988-1992 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԲՌՆԱԳԱՂԹՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

NN ը/կ	Ազգանունը, անունը, հայրանունը	Անձնագրային տվյալները	Սեփականաշնորհման ենթակա բնակարանների գտնվելու վայրը, սենյակների թիվը	Բնակարանի մակերեսը (քառ. մ)	Զբաղեցրած բնակելի տարածքի սկզբնական արժեքը 25.10.2023 թ.-ի դրությամբ (դրամ)	Սեփականության իրավունքով կամ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով տրվող	Հողամասը
1.	Գրիգորյան Նաղյա Դավիթի Գրիգորյան Նորայր Վահրամի Գրիգորյան Նարեկ Վահրամի	AS0332066, տրված՝ 13.08.2018 թ.-ին, 019-ի կողմից, 014210363, տրված՝ 16.05.2022 թ.-ին, 019-ի կողմից, ծննդյան վկայական՝ ԱԲ N242863, տրված՝ 14.03.2013 թ.-ին /ծնվ.՝ 03.01.2008 թ.-ին/	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Ուսանողական 4/1 շենք (էներգետիկական քոլեջ), թիվ 509, թիվ 511 սենյակներ	13.4 13.7	141,432.4 144,599	համատեղ սեփականության իրավունքով	համատեղ սեփականության իրավունքով

2.	Գրիգորյան Անուշ Ռուբենի	AU0533316, տրված՝ 17.12.2021 թ.-ին, 099-ի կողմից	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Ուսանողական 4 շենք (ճարտարագիտական քոլեջ), թիվ 909ա սենյակ	19.3	221,067	սեփականության իրավունքով	սեփականության իրավունքով
3.	Բաղդասարյան Արթուր Հենրիկի Չափարյան Ռուզաննա Բաբկենի Բաղդասարյան Արմեն Արթուրի Բաղդասարյան Արսեն Արթուրի	AP0485281, տրված՝ 26.07.2016 թ.-ին, 019-ի կողմից, AU0660645, տրված՝ 25.03.2022 թ.-ին, 019-ի կողմից, AT0231754, տրված՝ 26.07.2019 թ.-ին, 059-ի կողմից, AT0231753, տրված՝ 26.07.2019 թ.-ին, 059-ի կողմից	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Ուսանողական 4 շենք (ճարտարագիտական քոլեջ), թիվ 517 սենյակ	33.95	388,872	համատեղ սեփականության իրավունքով	համատեղ սեփականության իրավունքով
4.	Միրզոյան Էմմա Յուրիի	BA1727819, տրված՝ 09.10.2014 թ.-ին, 032-ի կողմից	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Ուսանողական 4 շենք (ճարտարագիտական քոլեջ), թիվ 412ա սենյակ	18.8	215,340	սեփականության իրավունքով	սեփականության իրավունքով

5.	Բաբայան Լյուդմիլա Ղարիբի	AU0538152, տրված՝ 07.12.2021 թ.-ին, 005-ի կողմից	ք. Երևան, Նոր Նորք, Մոլդովական 29/1 շենք, թիվ 609 սենյակ	16.8	124,354	սեփականության իրավունքով	սեփականության իրավունքով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

01.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ